

### 3. Հայաստանի կենսաբազմազանություն

Հայաստանի տեղադիրքը և ռելիեֆը նպաստել են կենսաբազմազանության մեծ տեսականու, էնդեմիզմի բարձր մակարդակի և հարուստ ագրոկենսաբազմազանության ձևավորմանը: Հանրապետության տարածքի վրա հաշվվում են մոտ 3500 տեսակի բարձրակարգ ծաղկավոր բույսեր, ավելի քան 17500 կենդանատեսակներ, որոնցից մոտ 500-ը ողնաշարավորներ են: Ցածրակարգ բույսերի և միկոոթոզանիզմների քանակությունն անցնում է մի քանի տասնյակ հազարից: Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ 1 քառ. կմ-ի վրա ավելի քան 100 տեսակ: Հայաստանի կենսաբազմազանությունն առանձնանում է նաև էնդեմիկ, ռելիկտ և հազվագյուտ տեսակների առատությամբ: Ֆլորայի էնդեմիկների քանակը կազմում է 106 տեսակ, որը նրա բուսական աշխարհի տեսակային ընդհանուր բազմազանության մոտ 3%-ն է, իսկ ցամաքային ֆաունայինը՝ 329, որոնցից 316-ն՝ անողնաշարավորներ:

Հայաստանի կենսաբազմազանությունը չափազանց հարուստ է տնտեսական արժեքավոր տեսակներով: Բույսերի մոտ 2000 տեսակ օժտված են սննդարար, կերային, դեղատու, ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու հատկանիշներով, մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկանիշներով: Կենսաբազմազանության մեջ առավել շատ են մշակովի բույսերի ու բուծվող կենդանիների վայրի ցեղակիցները, որի շնորհիվ Հայաստանը հնուց ի վեր եղել է անասնապահության և երկրագործության կենտրոններից մեկը:

Հայաստանն երկրագնդի այն տարածքներից է, որոնք ունենալով հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանություն, միաժամանակ աչքի են ընկնում այդ բազմազանությունը վտանգող գործոնների բազմազանությամբ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակի կապված են մարդածին ազդեցության հետ: Այդ ազդեցությունների հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի «կորուստ», էկոհամակարգերի և դրանց համակեցությունների տեսակային կազմի փոփոխություն, ընդհուպ առանձին տեսակների ոչնչացում, կենսառեսուրսների գերօգտագործում, աղտոտում, ներմուծված և օտարածին տեսակների ներթափանցմամբ բնական կենսաբազմազանության խաթարում: Կենսաբազմազանության պահպանությունն ու շարունակական օգտագործումն, որպես համայն մարդկության կայուն զարգացման երաշխիք, իր արտացոլումն է գտել «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայում (Ռիո-դե-ժանեյրո, 1992թ.): Հայաստանի Հանրապետությունն այս կոնվենցիան վավերացրել է 1993թ. մայիսի 14-ին, որով ստանձնել է մի շարք պարտավորություններ՝ կենսաբազմազանության պահպանության, ինչպես նաև կենսապաշարների կայուն օգտագործման արդյունավետ մեխանիզմների մշակման և ներդրման ուղղություններում:

**3.1. Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ):** Հայաստանում կենսաբազմազանության պահպանությունն իրականացվում է ex-situ<sup>1</sup> և in-situ<sup>2</sup> պայմաններում, որն առավել արդյունավետ գործում է բնության հատուկ պահպանվող տարածքներում: ԲՀՊՏ ցանցը (արգելոցներ, արգելավայրեր, ազգային պարկեր և բնության հուշարձաններ) ընդգրկում

<sup>1</sup> Կենսաբազմազանության բաղադրիչների պահպանություն տարածման բնական միջավայրից դուրս:

<sup>2</sup> Կենսաբազմազանության բաղադրիչների պահպանություն տարածման բնական միջավայրում:

է երկրի տարածքի մոտ 10%-ը (311 հազ. հա), իսկ առանց Սևանա լճի հայելու մակերեսի այն կազմում է հանրապետության տարածքի մոտ 6%-ը: Լանդշաֆտային և կենսաբանական հարուստ բազմազանություն և բնական էկոհամակարգերի վրա անտրոպոգեն ակտիվ ճնշում ունեցող երկրի համար պահպանվող տարածքների նշված քանակությունը խիստ անբավարար է: ԲՀՊՏ ցանցում չեն ներառված կամ անբավարար են ներկայացված նաև Հայաստանի համար սոցիալ-տնտեսական և բնապահպանական, այդ թվում նաև կենսաբազմազանության պահպանության առումով, մեծ նշանակություն ունեցող տափաստանային և մարգագետնաարոտավայրային էկոհամակարգերը:

Հայաստանի ԲՀՊՏ-երի ներկա ցանցի ձևավորումը սկսվել է 1958թ-ից, երբ ստեղծվեցին «Խոսրով», «Դիլիջան» և «Շիկահող» պետական արգելոցները, իսկ Մարտունու, Գյուլագարակի, Ջերմուկի, Ջեր-Ջերի անտառտնտեսությունները, ինչպես նաև ՀՀ տարածքում կենու, արջընկուզենու, չինարի, հունական ընկուզենու, տանձենու, խնձորենու, գիհու և հոնի վայրի ծառաթփային տեսակների տարածքները հայտարարվեցին պետական արգելավայրեր: 1959թ. պետական արգելավայրեր հայտարարվեցին նաև Ծաղկաձորի բանքսի սոճու պուրակները, Գոռավանի ավազուտները, Արագածի հարավային գագաթամերձ ալպյան մարգագետինները, Հանքավանի մրտավարդենու աճելավայրերը և Սևանա լճի ազատված հողագրունտները: Հետագայում, կենսաբազմազանության պահպանության տարբեր նպատակներով ստեղծվեցին այլ արգելոցներ ու արգելավայրեր և 2003թ. վերջի դրությամբ հանրապետությունում գործել են 3 պետական արգելոցներ («Խոսրով», «Շիկահող» և «Էրեբունի»), 23 պետական արգելավայրեր և 2 ազգային պարկեր («Սևան» և «Դիլիջան»):

2003թ. հանրապետության 2 ազգային պարկերի և 3 պետական արգելոցների ընդհանուր մակերեսը կազմել է 218.2 հազ. հա: Անտառածածկ տարածքը կազմել է դրանց ընդհանուր տարածքի 24.1%-ը (52.5 հազ. հա), մարգագետինները՝ 8.0%-ը (17.4 հազ. հա), ջրածածկ տարածքները՝ 57.5%-ը (125.6 հազ. հա), իսկ 10.4%-ը (22.7 հազ. հա)՝ այլ տարածքներն են: Հատուկ տարածքներով անցնող բոլոր կարգի ճանապարհների երկարությունը կազմել է 846 կմ:

Հատուկ պահպանվող տարածքների աշխատողների թվաքանակը տարեվերջին կազմել է 466 մարդ, որոնց 4.3%-ը գիտական աշխատողներն են, 58.8%-ը՝ պահպանության ծառայության աշխատողները, իսկ 36.9%-ը՝ այլ բնույթի աշխատողներ:

Ֆինանսական մուտքերը կազմել են 247.0 մլն. դրամ, որից 194.6 մլն. դրամը՝ ՀՀ պետական բյուջեից, 52.4 մլն. դրամը՝ արտաբյուջետային միջոցներից: Ֆինանսական ծախսերը կազմել են 249.3 մլն. դրամ, որի 15.0%-ը կազմել են նյութական ծախսերը, 5.8%-ը՝ ոչ նյութական ծառայությունների վճարումները, 0.6%-ը՝ գործուղման ծախսերը, 39.6%-ը՝ աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները, 15.0%-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները, 24.0%-ը՝ այլ ծախսերը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանվում են հանրապետության ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60%-ը, այդ թվում հազվագյուտ, անհետացման վտանգված և էնդեմիկ տեսակների գերակշռող մասը, ինչպես նաև վայրի գեմետիկ ռեսուրսները:

**Ազգային պարկերը** տարածքներ են (ջրատարածքներ), որոնք ընդգրկում են հատուկ էկոլոգիական պատմաշակութային և գեղագիտական արժեք ներկայացնող բնական համալիրներ և օբյեկտներ, որոնք բնական և մշակութային լանդշաֆտների բարենպաստ

զուգորդման շնորհիվ կարող են օգտագործվել ռեկրեացիոն, պատմամշակութային ու գիտական նպատակներով:

**«Սևան» ազգային պարկը** ստեղծվել է 1978թ.: Գտնվում է Հայաստանի կենտրոնական մասում, զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և նրա հարակից ազատված հողատարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ. հա, որից 24.9 հազ. հա-ն առափնյա ցամաքային տարածքներն են: Այն շրջափակված է Արեգունի, Գեղամա, Վարդենիս, Փամբակ և Սևանի լեռների լանջերով: Այստեղ պահպանվում են բույսերի 1600 և կենդանիների 330 տեսակներ: Արտանիշի թերակղզին «Սևան» ազգային պարկի ցամաքային տարածքի ամենախոշոր մասն է կազմում՝ 2.5 հազ. հա և ունի հարուստ բուսական աշխարհ:

**«Դիլիջան» ազգային պարկը** կազմակերպվել է 2002թ., ստեղծվել է 1958թ-ից կազմակերպված «Դիլիջան» պետական արգելոցի և դրան հարակից տարածքների սահմաններում:

Պարկը գտնվում է հանրապետության հյուսիսային հատվածում, Փամբակի, Արեգունու, Միափորի, Գուգարաց լեռնաշղթաների լանջերին, զբաղեցնում է 28002 հա տարածություն, որից 26010 հա-ն՝ անտառածածկ:

Այստեղ պահպանվում են կովկասյան տիպի մեզոֆիլ անտառները, հաճարենու և կաղնու համակեցությունները, կենու եզակի պուրակը, անտառային հազվագյուտ ֆաունան և պատմաճարտարապետական ու բնության հազվագյուտ հուշարձանները:

Պարկի տարածքը բաժանված է արգելոցային, հանգստի (ռեկրեացիոն), տնտեսական տարածագործառնական գոտիների:

**Պետական արգելոցները** էկոլոգիական, գիտական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված տարածքներ են, որտեղ բնական միջավայրի զարգացման պրոցեսներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության: Արգելոցները ստեղծված են ապահովելու բնական միջավայրի և կարևոր տեսակների պահպանությունը: Այստեղ մարդկային գործունեությունը սահմանափակվում է միայն գիտական հետազոտություններով:

**«Խոսրով» պետական արգելոցը** ստեղծվել է 1958թ., գտնվում է Գեղամա լեռնավահանի հարավային դիրքադրության և Ուրծի ու Երանոս լեռնաշղթաների հյուսիս-արևմտյան լանջերին, Ազատ և Խոսրով գետերի ավազաններում՝ 1400-2250 մ բարձրությունների սահմաններում, զբաղեցնում է 29196 հա տարածություն: Այստեղ պահպանվում են կենտրոնական Հայաստանի չոր նոսրանտառային, ֆրիգանային ու կիսաանապատային լանդշաֆտները, դրանց բուսական ու կենդանական եզակի համակեցություններով և բույսերի 1800 ու կենդանիների 393 տեսակներով:

**«Շիկահող» պետական արգելոցը** ստեղծվել է 1958թ., գտնվում է Սյունիքի մարզի Ծավ և Շիկահող գետերի ավազաններում՝ 700-2400 մ բարձրությունների սահմաններում, զբաղեցնում է 10 հազ. հա տարածություն: Այստեղ պահպանվում են հարավային Հայաստանի կաղնուտա-բոխուտային անտառները և դրանց բնորոշ բուսական ու կենդանական համակեցությունները:

Հաշվի առնելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրով» նախատեսված ժամանակացույցը, 2004թ. սկսվել են աշխատանքներ «Շիկահող» պետական արգելոցի տարածքների վերանայման, սահմանների ճշգրտման և քարտեզագրման ուղղությամբ:

**«Էրեբունի» պետական արգելոցը** ստեղծվել է 1981թ., գտնվում է Արարատյան գոգավորության նախալեռնային հատվածում՝ Ողջաբերդի սարավանդի հարավ-արևմտյան լանջերին, զբաղեցնում է 89 հա տարածք: Ստեղծված է վայրի հացազգիների բնական գենոֆոնդի պահպանության նպատակով:

**Պետական արգելավայրերը** մշտապես կամ ժամանակավորապես առանձնացված տարածքներ են, որոնց սահմաններում ապահովվում են էտալոնային, գիտական, պատմամշակութային, տնտեսական արժեք ունեցող բնական համալիրների և դրանց տարրերի պահպանությունն ու վերարտադրությունը:

Արգելավայրերի տարածքում սահմանափակվում կամ արգելվում է ցանկացած գործունեություն, որը հակասում է արգելավայրի նպատակային նշանակությանը:

Հայաստանի արգելավայրերին տրված է բնական համալիրների և հատկապես դրանց արժեքավոր բաղադրամասերի պահպանության, բուսակենդանական աշխարհի գենոֆոնդի բարելավման և վերարտադրության, ինչպես նաև տարածքի տնտեսական և բնակչության հարաբերությունների հավասարակշռությունը ապահովելու ֆունկցիաներ:

**Հայաստանի հանրապետությունում գրանցված արգելավայրերը**

Արգելավայրի անվանումը	Կազմավորման տարեթիվը
Ախնաբատի կենու պուրակ (անտառակ)	1958
Սոսու պուրակ	1958
Արջատխլենու	1958
Գիհու նոսրանտառներ	1958
Մրտավարդենու	1959
Արագածի այլայան	1959
Մարգահովտի	1959
Գյուլագարակի	1958
Գոռավանի ավազուտներ	1959
Բանկսի սոճու	1959
Չերիերի նոսրանտառային	1958
Ջերմուկի	1958
Ջերմուկի ջրաբանական	1983
Արգականի - Մեղրածորի	1971
Իջևանի	1971
Գանձաքարի (Վերին Աղդանի)	1971
Գետիկի	1971
Եղեգնածորի	1971
Հանքավանի ջրաբանական	1981
Որդան կարմիրի	1987
Բոխաքարի	1989
Գորիսի	1972
Սև լիճ	2001

**Բնության հուշարձանները** բացառիկ կամ տիպիկ գիտական և պատմամշակութային հատուկ արժեք ներկայացնող օբյեկտներ են: Հայաստանի լանդշաֆտային համալիրների և դրանց բաղադրամասերի ծագումնաբանական, հասակային, ձևաբանական և այլ հատկանիշների մեծ տարբերությունները ստեղծել են բնության կենդանի և անկենդան հուշարձանների հարուստ բազմազանություն: Դրանցից շատերն ունեն միջազգային մեծ նշանակություն և համարվում են միջազգային չափանմուշներ:

Բնության կենդանի հուշարձանների շարքին կարելի է դասել դարավոր ռելիկտային ծառատեսակները, որոնցից են լայնատերև սոսիները (Ծաղկավան գյուղի, Ծավ գետի հովտի,

Մեղրիի շրջակայքի), Հուդայի ծառը և այլն, իսկ անկենդան հուշարձանների շարքին՝ նորագույն հրաբխային գոյացումները, որոնք հանդիպում են Ազատի, Արփայի, Հրազդանի, Որոտանի գետահովիտներում, ինչպես նաև Գեղամա և Վարդենիսի լեռնազանգվածների յուրօրինակ հրաբխային կոները, Երևանի հարավ-արևելյան տարածքում չորրորդական ժամանակաշրջանի տարագույն կավերի վրա ձևավորված 8000 հա «պալեոհիդրոնորֆ ալկալի կապակցված», ինչպես նաև Արարատյան դաշտավայրում ձևավորված սոդային հիդրոնորֆ աղուտ-ալկալի հողերը, ռելիեֆի հողմահարման եզակի գոյացումներ (Գորիսի բնական հողաբուրգերը և տարբեր հրաշակերտ գոյացումներ), բազմաթիվ բարձրալեռնային լճակներ, հանքային և քաղցրահամ աղբյուրներ, ջրվեժներ, սահանքներ և այլն:

Հայաստանում դեռևս չի հաստատված բնության հուշարձանների ցանկը, սակայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրի» շրջանակներում նախատեսվում է իրականացնել բնության հուշարձանների գույքագրման, անձնագրավորման և ցանկի հաստատման աշխատանքներ:

**3.2. Անտառային տնտեսություն և անտառտնտեսական աշխատանքներ:** 2003թ. ՀՀ անտառային ֆոնդը կազմել է 368.0 հազ. հա, որի մոտ 75.3%-ը ծածկված է անտառներով: Անտառվերականգնման աշխատանքներ են կատարվել 700.1 հա-ի վրա (ծախսված գումարը՝ 10587.7 հազ. դրամ), 2002թ. 726 հա-ի դիմաց, որից անտառի տնկում և ցանքս՝ 298.1 հա-ի վրա (3735.1 հազ. դրամ), 2002թ. 278 հա-ի դիմաց, ընդ որում՝ պետական նշանակության անտառներում անտառտնկում կատարվել է 211.7 հա-ի վրա, որի համար ծախսվել է 2723.0 հազ. դրամ:

Անտառի բնական վերաճին օժանդակող միջոցառումներ են կատարվել 402 հա-ի վրա, որի համար ծախսվել է 5774.0 հազ. դրամ, ցանկապատվել է 110 հա անտառային տարածք, իսկ 225 հա-ի վրա իրականացվել է անտառային հողերի հանքայնացում: Անտառկուլտուրաների լրացում և անտառպուրակի խնամք կատարվել է համապատասխանաբար 269 և 460.4 հա-ի վրա, որոնց համար ծախսվել է 1534.3 և 16998.0 հազ. դրամ: Բնափայտային և թփուտային տեսակների ցանքս է կատարվել 4.71 հա տնկարկներում (ծախսված գումարը՝ 2225.0 հազ. դրամ), անտառկուլտուրաների խնամք՝ 3126 հա-ի վրա (29324.0 հազ. դրամ), ծառատեսակների, թփերի պտղային և հատապտղային տեսակների սերմնաբույսերի հիմնում դպրոցներում՝ 4.75 հա-ի վրա (1141.0 հազ. դրամ), հող է նախապատրաստվել անտառկուլտուրաների, տնկարկների, տնկադաշտերի և դպրոցների ստեղծման համար 554.9 հա-ի վրա (30268.3 հազ. դրամ):

2003թ. նթերվել է 15137.5 կգ սերմ, որի համար ծախսվել է 3312.0 հազ. դրամ: Մթերված սերմի 99.5%-ը բաժին է ընկել սաղարթավոր և ծառաթփային տեսակներին (պտղահնդավորներ՝ 115.9 կգ, ընկուզապտղավորներ՝ 6153.0 կգ, կաղնի՝ 8680.5 կգ և այլ՝ 113.1 կգ), իսկ մնացած 0.5%-ը կամ 75 կգ-ը բաժին է ընկել փշատերևավորներին (հիմնականում սոճի՝ 58 կգ): Սերմերի մնացորդը տարեվերջին կազմել է 5450.0 կգ, որի 99.5%-ը բաժին է ընկել սաղարթավոր և ծառաթփային տեսակներին:

2003թ. պետական նշանակության անտառներում անտառի շարք է փոխադրվել անտառկուլտուրաներ 327 հա-ի վրա, որի համար ծախսվել է 44218.0 հազ. դրամ: Կատարվել է խոտհունձ 472.9 հա-ի վրա, որի դիմաց գանձվել է 3174.3 հազ. դրամ:

2003թ. իրականացված անտառտնտեսական աշխատանքների ծավալը կազմել է 593.5 մլն. դրամ, 2002թ. 550.7 մլն. դրամի դիմաց:

Կանաչ գոտիների բարեկարգում կատարվել է 460 հա տարածքի վրա, որի համար ծախսվել է 7.1 մլն. դրամ:


Անտառհատումներ են կատարվել 3683 հա տարածքի վրա (2002թ.՝ 3366 հա), որի 79.8%-ը կամ 2940 հա-ն կազմել են սանհիտարական հատումները, մնացածը՝ անտառվերականգնման (186 հա), անցումային (389 հա), նոսրացման (132 հա), լուսավորման և մաքրման (6.5 հա) և այլ (29.5 հա) հատումներն են: Անտառհատումների համար ծախսված գումարը կազմել է 1128.0 հազ. դրամ, որից սանհիտարական հատումների համար՝ 971.0 հազ. դրամ, անտառվերականգնման աշխատանքների համար՝ 68.0 հազ. դրամ, անցումային հատումների համար՝ 56.0 հազ. դրամ, նոսրացման հատումների համար՝ 25.5 հազ. դրամ, այլ աշխատանքների համար՝ 7.5 հազ. դրամ:

Իրացվել է օգտագործման համար պիտանի 75.6 հազ. խիտ խոր. մ փայտանյութ (2002թ.՝ 68.9 հազ. խիտ խոր. մ ), որի 17.6%-ը կամ 13.3 հազ. խիտ խոր. մ-ը շինափայտ է: Շինափայտի ընդհանուր ծավալի 77.8%-ը ստացվել է սանհիտարական հատումներից:

Անտառհատումների և մթերված փայտանյութի ծավալները, 2001-2003թթ.

Անտառհատումների տեսակները	Փաստացի հատված տարածքը, հա			Մթերված փայտանյութի ծավալը, խիտ խոր. մ					
				ընդամենը			որից՝ շինափայտ		
	2001	2002	2003	2001	2002	2003	2001	2002	2003
Հատումների ծավալը, ընդամենը	3264	3366	3683	62481	68867	75569	11751	12890	13300.7
այդ թվում՝ անտառվերականգնման	355	173	186	9967	5259	5554	3599	2012	1701.0
լուսավորման և մաքրման	127	34	6.5	1277	191	35	-	8	-
նոսրացման	202	180	132	2188	2254	1585.1	603	538.5	428.5
անցումային	300	274	389	5722	6423	5725	921	1196	754.0
սանհիտարական	2270	2686	2940	42952	54496	61839.4	6583	9134	10345.7
վերականգնման	-	-	-	-	-	-	-	-	-
այլ	10	19	29.5	375	244	830.5	45	1.5	71.5

Անտառհատումների ծավալներն ըստ տեսակների, 2003թ.



**Հատատեղերում փայտանյութի շարժը, 2001-2003թթ.\***

	2001	2002	2003
Իրացման ենթակա չարտահանված փայտանյութի մնացորդը պահեստներում, ընդամենը, խոր. մ	4756.1	6841.0	-
այդ թվում՝ անտառվերականգնման հատումներից	431.3	523.0	-
սանիտարական և այլ հատումներից	4324.8	6318.0	-
Ըստ հատատեղերի տեղազննման նյութերի թույլ են տրված փայտանյութի բաց թողնման կանոնների խախտում	10413.6	6629.2	3000.2
չհատված փայտանյութ, խոր. մ			
հատատեղերում թողնված փայտանյութի մնացորդը, խոր. մ	8716.3	6841.0	-
ոչնչացվել է պահպանության ենթակա մատղաշը և դեռահասը, հա	99.7	48.2	-
Մաքրման ենթակա հատատեղերի մակերեսը, հա	3960.0	3392.0	288.0
այդ թվում՝ համալիր հատումներից	3745.0	3104.0	-
Չմաքրված հատատեղերի մակերեսը, հա	1240.7	1146.0	180.0
այդ թվում՝ համալիր հատումներից	1226.7	-	-


\* Հաշվառումը տարվում է տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև հաջորդ տարվա հունիսի 1-ը:

2003թ. արձանագրվել է անտառային հրդեհների 4 դեպք 3.9 հա տարածքի վրա, 2002թ. համապատասխանաբար 6-ի և 18.6 հա-ի դիմաց: Հրդեհներն ընդգրկել են 0.4 հա անտառածածկ տարածք: Յուրաքանչյուր հրդեհ միջին հաշվով ընդգրկել է 0.1 հա անտառածածկ տարածք (2002թ.՝ 0.9 հա):

**Անտառային հրդեհների քանակը և պատճառած վնասը, 2001-2003թթ.**

	2001	2002	2003
Հրդեհների քանակը, միավոր	13	6	4
այդ թվում ըստ պատճառների՝ գյուղատնտեսական հողատեսքերի հրկիզումից	1	2	-
բնակչության մեղքով	11	4	4
այլ կազմակերպությունների մեղքով	1	-	-
Հրդեհված տարածքի մակերեսը, հա	266.6	18.6	3.9
որից՝ անտառածածկ	126.8	5.7	0.4
Հրդեհներից անտառտնտեսություններին պատճառված վնասը, մլն. դրամ	55.7	1.1	-
Անտառվերականգնման աշխատանքների արժեքը, հազ. դրամ	10661.2	380.0	-
Տարածքի մաքրման աշխատանքների արժեքը, հազ. դրամ	610.0	4.5	-
Հրդեհների մարման ծախսերը, հազ. դրամ	1528.2	504.6	-
Հրդեհների հետ կապված ակտավորված հետաքննության նյութերի քանակը, միավոր	13	4	4
Անտառային պահախմբի կողմից վարչական կարգով			
տուգանման դեպքերի քանակը, միավոր	2	3	-
զանձված տուգանքը, հազ. դրամ	208.2	149.9	-

Անտառային հրդեհների քանակը, 1995-2003թթ., միավոր



2003թ. կատարվել է անտառպաթուղոգիական ուսումնասիրություն 3710 հա-ի վրա (ծախսված գումարը՝ 437.0 հազ. դրամ), 2002թ. 3507 հա-ի դիմաց: Վերգետնյա պայքարի միջոցառումներ են կատարվել 691 հա-ի վրա (ծախսված գումարը՝ 679.0 հազ. դրամ), 2002թ. 200 հա-ի դիմաց: Չորացած անտառտնկարկների և անտառմշակաբույսերի տարածքը կազմել է 1753 հա (2002թ.՝ 808 հա), որից 301 հա-ն՝ վնասակար միջատներից, 1 հա-ն՝ հիվանդություններից, 1451 հա-ն՝ այլ գործոններից (բացառությամբ հրդեհների):

2003թ. անտառի վնասատուների և հիվանդությունների օջախները տարեսկզբին զբաղեցրել են 14.8 հազ. հա, որի համար պահանջվել են պայքարի միջոցառումներ, սակայն փաստացի կատարվել են 1.7 հազ. հա-ի վրա: Վնասատուների ու հիվանդությունների օջախները տարեվերջին կազմել են 13.8 հազ. հա (2002թ.՝ 11.0 հազ. հա):

Անտառի վնասատուների և հիվանդությունների օջախների առկայությունը, 2003թ.

(հեկտար)

	Վնասատուների և հիվանդությունների օջախները տարեսկզբին	Վերացված է պայքարի միջոցառումներով	Վնասատուների և հիվանդությունների օջախները տարեվերջին
Փշատերևավորների վնասատուներ	472	-	362
Տերևակեր վնասատուներ	11211	1100	9101
այդ թվում՝ տարազույգ և օղակավոր մետաքսագործներ	4170	-	3010
ոսկետուտ	6670	1100	5670
կաղնու կանաչ տերևամուր	361	-	411
երկրաչափեր	10	-	10
Անտառի այլ վնասատուներ	1125	505	760
այդ թվում՝ կրծողներ	985	425	760
այլ	140	80	-
Անտառի հիվանդություններ	1996	-	3516
այդ թվում՝ կաղնու ալրացող	1690	-	3175
այլ	306	-	341
Ընդամենը	14804	1605	13739




2003թ. արձանագրվել է անտառախախտումների 1927 դեպք 2002թ-ի 2256-ի դիմաց: Վնասի ընդհանուր գումարը, ըստ անտառախախտման ակտերի, կազմել է 40.0 մլն. դրամ, որի 24.5%-ը կամ 9.8 մլն. դրամն անտառախախտողների կողմից մինչև 01.01.2004թ. կամավոր նուծվել է: Ընդհանուր անտառախախտումների 20.7%-ի կամ 399 դեպքի քննությունը հանձնվել է իրավապահ մարմիններին, դրանց 66.2%-ի կամ 264 դեպքի վերաբերյալ քրեական գործ է հարուցվել և նշանակվել տույժ: Վերականգնված ընդհանուր գումարը կազմել է 12.9 մլն. դրամ, որի 24.5%-ը վերականգնվել է ըստ վճիռների:


**Անտառախախտումներն ըստ ուղղությունների, 2001-2003թթ.**

		2001	2002	2003
Ապօրինի անտառախախտումներ	ակտերի քանակը, միավոր	1658	2065	1732
	ծառերի քանակը, միավոր	7652	10241	6684
	ծավալը, խոր. մ	2772.7	3395.1	2559.8
Անասունների չթույլատրված արածեցում	ակտերի քանակը, միավոր	85	148	117
	գլխաքանակը, միավոր	4856	4360	4503
Հողազավթում	ակտերի քանակը, միավոր	60	24	26
	տարածքը, հա	114.89	3.14	4.3
Որսկանոնների խախտումների ակտերի քանակը, միավոր		160	15	39
Անօրինական խոտհունձ և այլն	ակտերի քանակը, միավոր	4	4	13
	տարածքը, հա	2.51	3.35	24.0
Ակտերի ընդհանուր քանակը, միավոր		1967	2256	1927

**Անտառախախտումներն ըստ ուղղությունների, 2003թ.**



**Անտառխախտումների քանակը, 1995-2003թթ., միավոր**



**Անտառխախտումների գործերի չարժն ըստ ուղղությունների, 2003թ.**

(միավոր)

	Ընդամենը	այդ թվում՝ ըստ անտառխախտման ուղղությունների				
		ապօրինի անտառահատումներ	անասունների չթույլատրված արածեցում	հողագավթում	անօրինական խտհունձ և այլն	որսականոնների խախտումներ
Չանձնվել է հետաքննության որից՝ հարուցվել է քրեական գործ	399	359	27	-	8	5
մերժվել է	264	241	18	-	1	4
նշանակվել է տույժ	5	2	-	-	2	1
կարճվել է	125	116	9	-	-	-
	5	-	-	-	5	-

**Անտառխախտումների վնասի գումարի չափն ըստ ուղղությունների, 2003թ.**

(հազ. դրամ)

	Գանձման ենթակա վնասի գումարը	որից		Վերականգնված ընդհանուր գումարը
		կամավոր մուծվել է ըստ անտառխախտման ակտերի	վերականգնվել է ըստ վճիռների	
Ընդամենը	39972.8	9778.7	3175.3	12954.0
այդ թվում				
ապօրինի անտառահատումներ	34067.7	8712.7	3175.3	11888.0
անասունների չթույլատրված արածեցում	2724.1	242.5	-	242.5
հողագավթում	1455.1	775.0	-	775.0
որսականոնների խախտումներ	132.0	14.0	-	14.0
անօրինական խտհունձ և այլն	1593.9	34.5	-	34.5

**3.3. Որսորդական տնտեսություն:** 2003թ. որսորդական տնտեսությունների վարման ընդհանուր ծախսերը կազմել են 290.0 հազ. դրամ: Մակերեսը, որտեղ անցկացվել է վայրի կենդանիների հաշվառում, կազմել է 510 հազ. հա: Որսորդական տնտեսություններում զբաղված

աշխատողների թվաքանակը, ըստ տարեվերջյան ցուցակի, կազմել է 6 մարդ, բոլորն էլ եղել են մասնագետ որսագետներ, որոնց աշխատավարձը կազմել է 240.0 հազ. դրամ:

2003թ. վայրի կենդանիների պահպանման և վերարտադրության ծախսերը կազմել են 2615.0 հազ. դրամ, որի 19.9%-ը ծախսվել է վայրի կենդանիների հաշվառման անցկացման համար, 34.4%-ը՝ վայրի կենդանիների պահպանման համար, իսկ 45.7%-ը՝ վայրի կենդանիների պահպանման և վերարտադրության կենսատեխնիկական միջոցառումների իրականացման համար: Վայրի կենդանիների համար կերի մթերման նպատակով ծախսվել է 1700.0 հազ. դրամ: Որսորդոտեսավարական և որսորդոտեսական հետազոտության համար ընդգրկված տարածքը կազմել է 800.0 հա, որի համար ծախսվել է 200.0 հազ. դրամ:

2003թ. հաշվառվել է 455 մուշտակամորթ (450 նապաստակ և 5 շնագայլ), 21145 փետրավոր թռչուն (1590 աղավնի, 925 քարակաքավ, 20 մոխրագույն կաքավ, 2280 բադ, 2830 սև փարփար և 13500 լոր):

**3.4. Բուսական պաշարների օգտագործում:** Հայաստանում ուտելի վայրի բույսերը ներկայացված են ավելի քան 200 տեսակներով: Դրանցից շատերը (բոխին, շրեշը, շուշանը, դանձիլը և այլն) բնակչության կողմից անխնա օգտագործելու հետևանքով ներկայումս դարձել են հազվագյուտ կամ գտնվում են ոչնչացման վտանգի տակ: Հայաստանում հայտնաբերված մոտ 300 տեսակի ուտելի սնկերից բնակչության կողմից օգտագործվում է միայն 10 տեսակը:

Կերային բույսերի երկարատև անկանոն օգտագործման և վերարտադրության անհրաժեշտ ագրոտեխնիկական միջոցառումների բացակայության պատճառով խոտհարքների և արոտավայրերի զգալի տարածքներ տրորված են ու պատված կոպտացողուն, ոչ կերային, թունավոր բույսերով և գտնվում են դեգրադացման տարբեր աստիճաններում: Գյուղատնտեսության ոլորտում համատարած սեփականաշնորհումից հետո բնական կերհանդակների օգտագործման և պահպանության խնդիրներն էլ ավելի են բարդացել և մասնատումների պատճառով առավել նվազ արդյունավետ է դարձել ագրոմիջոցառումների կիրառումը: Տափաստանային և մերձալպյան գոտու ստորին սահմաններում արածեցման ծանրաբեռնվածությունը 2-3 անգամ ավելացել է և լուրջ նախադրյալներ է ստեղծվել էռոզիոն գործընթացների զարգացմանը:

Հայաստանի դենդրոֆլորայի տեսակային կազմի մոտ 40%-ը (120 տեսակ) վայրի պտղատու տեսակներ են, որոնց պտուղները մեծ կիրառություն ունեն պահածոների արտադրության մեջ: Որպես դիմացկուն պատվաստակալ դրանք տնտեսապես արժեքավոր են նաև բարձր բերքատու պտղա-հատապտղային բույսերի սորտեր ստանալու համար: Վերջին տասնամյակում կտրուկ նվազել է անտառային պտուղների և այլ կողմնարդյունքների կազմակերպված օգտագործումը, որը բացասաբար է անդրադարձել անտառային սեկտորի զարգացման վրա:

Դեղաբույսերը նույնպես Հայաստանի ֆլորայի մեջ ունեն մեծ տեսակարար կշիռ (մոտ 10%): Դեղաբույսերից շատերն անհիշելի ժամանակներից ի վեր օգտագործվում են ժողովրդական բժշկության մեջ: Առավել մեծ նշանակություն ունեն սզնու, դժնիկի, գիհու, ծորենու, մասրենու այլ ցեղերի բազմաթիվ տեսակները: Որոշ դեղաբույսեր (սրիհունդ, անթառամ, դաղձ, ուրց, մատուտակ, լոշտակ) հավաքվում են մեծ քանակությամբ և այժմ դարձել են հազվագյուտ:

Հայաստանի բուսական աշխարհը հարուստ է նաև մեղրատու (շուրջ 350 տեսակ), գեղազարդային (մոտ 300 տեսակ), եթերայուղատու (շուրջ 120 տեսակ), ներկատու (մոտ 120

տեսակ), վիտամինատու (մոտ 130 տեսակ), դաբաղանյութեր պարունակող (մոտ 60 տեսակ) և խեժատու (60 տեսակ) բուսատեսակներով: Վայրի բուսական պաշարների օգտագործումը (հավաք, մթերում, ներմուծում և արտահանում) ներկայումս իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրվող հատուկ թույլտվությունների միջոցով:

Սակայն, դեռևս բացակայում են բուսական պաշարների հավաքի, մթերման գործառնությունները կարգավորող նորմատիվ ակտերը, որի հետևանքով բուսական պաշարների օգտագործումն անկառավարելի է: Անհանգստացնող է գեղազարդային բույսերի անկառավարելի մեծածավալ հավաքը, որոնց մեջ մեծ քանակ են կազմում հազվագյուտ և անհետացող տեսակները՝ ձնծաղիկը, վարդակակաչը, հիրիկը և այլն:

**3.5. Կենդանական պաշարների օգտագործում:** Հայաստանում վայրի կենդանիները հիմնականում օգտագործվում են որսորդական և ձկնորսական նպատակներով:

**Որսորդություն:** Հայաստանում հանդիպող 83 տեսակ կաթնասուններից որսի օբյեկտ կարող են հանդիսանալ մոտ 20-ը՝ ազնվացեղ կովկասյան եղջերուն, բծավոր եղջերուն, բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը, գորշ արջը, այծյամը, վարազը, գետի ջրասամույրը, ճահճակուղբը, կզաքիսը, աքիսը, գայլը, աղվեսը, վայրի (անտառային) կատուն, նապաստակը և այլն: Սակայն այս ցանկում նշվածները մեծամասամբ որսի համար արգելված տեսակներ են և գրանցված են Հայաստանի «Կարմիր գրքում»:

Տեսակային առումով թռչունների տեսականին, որպես որսի օբյեկտ, ավելի հարուստ է: Մշտաբնակ որսի թռչուններից հանրապետությունում հանդիպում են կովկասյան մայրեհավը, ուլարը, գորշ կաքավը, թխակապույտ աղավնին, քարակաքավը, սև փարփարը, սևուկ կտցարը, մեծ սուզակը, փոքր սուզակը, կռնչան բադը, մոխրագույն բադը և այլն:

Ամառային բնադրող թռչուններից որսի օբյեկտ են հանդիսանում լորը, անտառային աղավնին, տատրակը, մրգահավը, մոխրագույն կռունկը, գեղանի արոսը, ոտնացուպիկը, բզակտուցը, անտառակտցարը, մորակտցարը, մոխրագույն սազը, խայտաբղետ բադը և այլն:

Մեծ քանակ են կազմում չվող թռչունները:

Ներկայումս Հայաստանում որսորդները միավորված են «Որսորդների և ձկնորսների միություն», «Որսորդ» ՍՊԸ և «Հայկական զինվորական որսորդական ընկերություն» կազմակերպություններում, որոնց գործունեությունը համաձայնեցվում է ՀՀ բնապահպանության նախարարության հետ, մասնավորապես՝ որսատեսակների և որսվող կենդանիների թույլատրված քանակի սահմանման մասով:

**Ձկնորսություն:** Արդյունագործական ձկնորսության 90%-ն իրականացվում է Սևանա լճում ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված թույլտվությունների հիման վրա՝ «Սևան» ազգային պարկի հետ պայմանագրերի կնքման միջոցով: Սևանա լճի մակարդակի իջնեցումից հետո հիմնական որսատեսակներ են հանդիսանում սիգը և արծաթափայլ ծածանը:

Սիրողական ձկնորսությունը թույլատրվում է բոլոր գետերում և լճերում, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների:

**Մեթոդաբանական պարզաբանումներ և լրացուցիչ տեղեկատվություն**

**Անտառային ֆոնդի** տարածքը դա ՀՀ տարածքի այն մասն է, որը ծածկված է անտառով, ինչպես նաև այն ոչ անտառապատ տարածքը, որը տրամադրված է անտառային տնտեսության կարիքների համար: Անտառային ֆոնդը ներառում է փաստացի անտառապատ տարածքը, ինչպես նաև (փաստացի ծածկված ծառերի տեսակներով, տնկիների տարատեսակներով), ոչ անտառապատ տարածքը՝ գյուղատնտեսական հողատեսքեր (վարելահող, խոտհարք, արոտավայր և այլն), հատուկ նշանակության տարածքներ (ճանապարհներ, ջրանցքներ, տնամերձեր և այլն), ինչպես նաև ճահճային տարածքներ, ավազուտներ, հեղիեղատներ, թեք լեռնալանջեր և այլն:

**Տարածքի անտառապատությունն** անտառով ծածկված մակերեսի հարաբերությունն է հանրապետության ընդհանուր տարածքին:

**Անտառտնկիների ընդհանուր պաշարն** անտառածածկ տարածքի բնափայտի պաշարն է:

**Անտառչինարարությունը** միջոցառումների համակարգ է, որն իր մեջ ներառում է անտառի սահմանների որոշումը, անտառի բաժանումը մասերի և անտառտնկիների հատվածների, խմբերի, պաշտպանվածության կարգերի (ջրապահպան, պաշտպանողական, սանիտարա-հիգիենիկ, առողջարարական և այլն), անտառային ֆոնդի գույքագրումը (անտառի մակերեսը և փայտանյութի պաշարը), անտառի տարեկան օգտագործման ծավալների որոշումը (հաշվարկային անտառահատում), անտառվերականգնումը և այլն:

**Անտառվերականգնումը** միջոցառումների անցկացումն է՝ ուղղված հատատեղերի, այրված, ամայացված վայրերի, բացատների և նախկինում անտառածածկ այլ մակերեսների վերականգնմանը: Անտառվերականգնումը ներառում է անտառի տնկումը, ցանքսը և անտառի բնական վերականգնմանն աջակցող միջոցառումները:

Անտառային մշակաբույսերի տեղափոխումն անտառածածկ մակերեսի վրա, համաձայն նոր ճյուղային ստանդարտի, սկսած 1991թ-ից 5 տարեկան մատղաշի փոխարեն իրականացվում է 7 տարեկանից:

**Գլխավոր օգտագործման անտառահատումը և անտառվերականգնողական հատումները** փայտանյութի պատրաստման նպատակով հատուն ծառերի հատումն է:

**Անտառաչաշտպանական հատումներն** իրականացվում են ըստ տնկիների աճի ու զարգացման և նպատակաուղղված են ծառերի ու թփերի մի մասի պարբերական հատմամբ տնկարկների մնացած մասի հետագա աճի պայմանների բարելավմանը:

**Հիմնական աշխատանքների կատարումն անտառային տնտեսությունում, 1995-2003թթ.**

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	
Անտառվերականգնումը, հա	1978	3134	1659.0	1284.2	750.2	1042.0	1122.8	726.0	700.1	
այդ թվում՝ անտառի տնկում և ցանք	948	861	507.0	432.2	360.2	422.0	322.8	278.0	298.1	
Մատղաշ տնկիների փոխադրումն արժեքավոր անտառային տնկիների կարգի մեջ, հա	443	343.4	218	144.6	133.2	126.0	55.0	98.0	327.0	
Վերականգնողական և գլխավոր օգտագործման անտառ-հատումներ	մակերեսը, հա	3170	4643	3734	2125	2706	2264	2270	2686	2940
	հատվել է լիկվիդային փայտանյութ, հազ. խիտ խոր. մ	72.3	84.9	57.5	37.5	32.7	43.0	42.7	55.5	56.6
Անտառխնամքի և սանիտարական նպատակներով անտառհատումներ	մակերեսը, հա	5725	6222	4957	2586	3461	3198	3264	3366	3683
	հատվել է լիկվիդային փայտանյութ, հազ. խիտ խոր. մ	98.5	104.2	72.4	44.5	41.8	78.0	73.6	74.0	76.0

**Անտառների պահպանումը վնասատուներից և անտառային հիվանդություններից, 1995-2003թթ.**

(հազ. հա)

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Վարակված օջախների ընդհանուր մակերեսը տարեսկզբին	19.9	18.2	23.6	26.2	35.6	29.2	22.4	11.4	14.8
այդ թվում՝ վարակված անտառային հիվանդություններով	0.1	0.3	1.5	1.6	1.6	0.7	1.2	1.0	2.0
Բուժում պահանջող վարակված օջախների մակերեսը	19.6	18.2	23.6	26.2	28.2	21.2	17.6	11.4	14.8
Վարակված օջախների մակերեսից պայքարի միջոցներով վերացված մակերեսը	1.6	2.6	1.5	3.9	0.9	0.4	0.3	0.1	1.6

**Արձանագրված անտառխախտումների և անտառային հրդեհների քանակը, 1995-2003թթ.**

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Անտառխախտումների քանակը, միավոր	38657	2715	2352	1776	2052	1974	1967	2256	1927
որից՝ անօրինական	38304	2193	1823	1542	1931	1907	1658	2065	1732
Անտառային հրդեհների քանակը, միավոր	2	24	5	32	15	38	13	6	4
Հրդեհների ենթարկված անտառային մակերեսը, հա	152.7	95.0	20.0	302.5	52.1	26.9	126.8	5.7	3.9